ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 09 » հոկտեմբերի 2025թ. № ***116*** - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ՊԱՐՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ 06-075-0240-0010 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,7108 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հուլիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշումով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 30-րդ մասի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համանքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 11.09.2025թ. թիվ 2/փ 296 դրական եզրակացությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06032025-06-0032 վկայականը և «ՈՒԱՅԹ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Վահե Կամոյի Կիրակոսյանի դիմումը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռի-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթում կատարել փոփոխություն՝ «Մարզ Լոռի, Համայնք Սպիտակ գյուղ Մեծ Պարնի 26-րդ փողոց 6 հողամաս» հասցեում գտնվող 06-075-0240-0010 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, 0,7108 հա մակերեսով գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության հողամասը փոփոխել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության, էներգետիկայի հողերի գործառնական նշանակության:

2. Համայնքի ղեկավարին՝ նշված փոփոխություններն արտացոլել Սպիտակ համայնքի Մեծ Պարնի բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Մեծ Պարնի բնակավայրի հաստատված գոտիավորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԶԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՐԻՆԵ ԴԻԼԱՔՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՐԱ ՄԱՏԻՆՅԱՆ

ԱՐՏԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հոկտեմբերի 9
ք. Սպիտակ